ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2014թ. N _____ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ
ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Արամի և Բուզանդի փողոցների՝ Մ.Սարյան փողոցից մինչև Մ.Մաշտոցի պողոտա ընկած հատվածներն անվանակոչել Հայաստանի Ազգային հերոս, պետական, քաղաքական գործիչ Կարեն Դեմիրճյանի անվանք։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագիծը ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու քննարկմանը՝ հիմք ընդունելով ՀՀ Նախագահի 27.12.1999թ. հրամանագիրը և հայ ականավոր քաղաքական, պետական գործիչ Կարեն Դեմիրճյանի այրի՝ Ռիմա Դեմիրճյանի 31.03.2014թ. գրությունը՝ հասցեագրված Երևանի քաղաքապետին, Երևան քաղաքի Արամի և Բուզանդի փողոցների՝ Մ.Սարյան փողոցից մինչև Մ.Մաշտոցի պողոտա ընկած հատվածները Կարեն Դեմիրճյանի անվամբ անվանակոչելու համար։

Կարեն Սերոբի Դեմիրճյանը ծնվել է 1932 թվականի ապրիլի 17-ին, Երևանում, ծառայողի ընտանիքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է 26 կոմիսարների անվան դպրոցում։ 1949 թվականին ընդունվել է Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը, որն ավարտել է 1954թ., ստանալով՝ ինժեներ-մեխանիկի մասնագիտություն։

Կ.Դեմիրճյանն իր աշխատանքային գործունեությունն սկսել է 1954 թ. Լենինգրադում։

Կ.Դեմիրճյանի աշխատանքային գործունեության առաջին տասնամյակը կապված է եղել Երևանի էլեկտրատեխնիկական գործարանի հետ։

1966թ. Կ.Ս.Դեմիրճյանն ընտրվել է Հայաստանի Կոմկուսի Երևանի քաղկոմի քարտուղար, 1971 թ. նոյեմբերի 1-ին՝ երկրորդ քարտուղար։

1972 թ. Կ. Դեմիրճյանն ընտրվել է ՀԿԿ ԿԿ քարտուղար և բյուրոյի անդամ:

1974 թ. նոյեմբերին Կ. Դեմիրճյանն ընտրվել է ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար:

1974 թ. սկսած Կ.Ս. Դեմիրճյանը բազմիցս ընտրվել է ՀԿԿ կենտկոմի, ԽՄԿԿ կենտկոմի անդամ, ԽՍՀՄ IX–XI գումարումների և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ։ Պարգևատրվել է՝ Լենինի, Աշխատանքային Կարմիր Դրոշի, Հոկտեմբերյան Հեղափոխության շքանշաններով, միութենական և այլ երկրների կառավարական պարգևներով։

1991-1999 թթ. Կ. Դեմիրճյանը գլխավորել է Հանրապետության խոշորագույն ձեռնարկություններց մեկը՝ «Հայէլեկտրամեքենա» ԱՓԲԸ-ն։

1998թ.-ին հիմնադրել է Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ):

1999թ.-ի ՀՀ խորհրդարանական ընտրությունների ժամանակ եղել է ՀԺԿ և Հանրապետական կուսակցության համագործակցությամբ ստեղծված «Միասնություն» դաշինքի համանախագահը:

1999 թ. մայիսին Կ. Դեմիրճյանը ընտրվել է Ազգային Ժողովի նախագահ։

Հետմահու հայ ականավոր պետական, քաղաքական գործիչ Կարեն Սերոբի Դեմիրճյանին շնորհվել է Հայաստանի Ազգային Հերոսի կոչում և Հայրենիքի շքանշան։

Կարեն Դեմիրճյանի ղեկավարության տարիներին (1974–88թթ.) շահագործման են հանձնվել «Զվարթնոց» և Գյումրիի օդանավակայանները, Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթը, Մարզահամերգային համալիրը (1999թ.-ից՝ Կարեն Դեմիրճյանի անվան), կառուցվել են Արփա–Սևան թունելը, «Հրազդանմաշ», «Պոզիստոր», «Իմպուլս», «Մարս» և այլ գործարաններ, Մասիս-Նուռնուս և Հրազդան - Իջևան երկթուղային մայրուղիները, գրապալատը և այլն:

Կ.Դեմիրճյանի անվամբ են կոչվել Երևանի մետրոպոլիտենը հ.139 դպրոցը, Մարզահամերգային համալիրը: 2004 թվականիցԵրևանում գործում է Կարեն Դեմիրճյանի թանգարանը:

Հաշվի առնելով քաղաքական, պետական գործիչ, Հայաստանի Ազգային հերոս Կարեն Սերոբի Դեմիրճյանի մեծ ավանդն և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կարեն Դեմիրճյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կարեն Դեմիրճյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ